

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ԹԱՎԱԴՅԱՆ ԱՐՄԵՆ ԱՇՈՏԻ

ՀԱՎԱՍՐՑԱԿՑԱՅԻՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ
ԻՐԱՎԱԿԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ ՀՀ-ՈՒՄ

ԺԲ.00.03 Մասնավոր իրավունք (քաղաքացիական, առևտրային (կոմերցիոն),
միջազգային մասնավոր, ընտանեկան, աշխատանքային, սոցիալական
ապահովության իրավունք) մասնագիտությամբ իրավաբանական
գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսության

ՍԵՂՄԱԳԻՐ

Երևան-2014

ЕРЕВАНСКИЙ ГОСУДАРСТВЕННЫЙ УНИВЕРСИТЕТ

ТАВАДЯН АРСЕН АШОТОВИЧ

**ПРАВОВЫЕ ПРОБЛЕМЫ РЕГУЛИРОВАНИЯ АНТИКОНКУРЕНТНЫХ
СОГЛАШЕНИЙ В РА**

АВТОРЕФЕРАТ

диссертации на соискание ученой степени кандидата юридических наук по
специальности 12.00.03 – Частное право: гражданское право; торговое
(коммерческое) право; международное частное право; семейное право; трудовое
право; право социального обеспечения.

ЕРЕВАН-2014

Ատենախոսության թեման հաստատվել էր երևանի պետական համալսարանում

Գիտական ղեկավար՝ իրավաբանական գիտությունների դոկտոր,
պրոֆեսոր Տ. Կ. Բարսեղյան

Պաշտոնական ընդդմիախոսներ՝ իրավաբանական գիտությունների դոկտոր,
պրոֆեսոր Ա. Ա. Լուկյանցև

իրավաբանական գիտությունների թեկնածու,
Հ.Կ. Կարապետյան

Առաջատար կազմակերպություն՝ Ռուս-հայկական (սլավոնական) համալսարան

Ատենախոսության պաշտպանությունը կայանալու է 2014 թ. հունիսի 13-ին, ժամը 14⁰⁰-ին Երևանի պետական համալսարանում գործող ԲՈՀ-ի իրավագիտության 001 մասնագիտական խորհրդի նիստում (0025, ք. Երևան, Ալեք Մանուկյան 1):

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ Երևանի պետական համալսարանի գրադարանի գիտաշխատողների ընթերցասրահում:

Սեղմագիրն առաքված է 2014թ.-ի մայիսի 13-ին:

Մասնագիտական խորհրդի գիտական քարտուղար
իրավ. գիտությունների թեկնածու, դոցենտ

Վ. Դ. Ավետիսյան

Тема диссертации утверждена в Ереванском государственном университете

Научный руководитель: доктор юридических наук,
профессор Т.К. Барсегян

Официальные оппоненты: доктор юридических наук,
профессор А.А. Лукьянцев

кандидат юридических наук А.К. Карапетян

Ведущая организация: Российско-Армянский (Славянский) университет

Защита состоится 13-ого июня 2014г. в 14⁰⁰ часов на заседании Специализированного совета ВАК 001 по юриспруденции при Ереванском государственном университете (0025, г. Ереван, ул. Алека Манукяна 1).

С диссертацией можно ознакомиться в читальном зале научных работников библиотеки ЕГУ.

Автореферат разослан 13 мая 2014г.

Ученый секретарь специализированного совета,
кандидат юридических наук, доцент

В.Д. Аветисян

Ատենախոսության ընդհանուր բնութագիրը

Հետազոտության թեմայի արդիականությունը: Ազատ շուկայական հարաբերություններն անհնար է պատկերացնել առանց տնտեսվարող սուբյեկտների միջև մրցակցության: Սուր մրցակցությունը ստիպում է գործարարներին փորձել արտադրել առավել որակով արտադրանք առավել ցածր գնով, ինչը, իր հերթին, հանգեցնում է տեխնոլոգիական առաջընթացին, հումքի խնայողության, ապրանքների բաշխման ուղիների օպտիմալիզացման:

Մրցակցային պայքարը, սակայն, երբեմն ձեռք է բերում այնպիսի ձևեր, որոնք վնաս են հասցնում և՛ տնտեսությանը, և՛ սպառողներին: Մրցակցային պայքարի այդպիսի արգելված ձև է նաև հակամրցակցային համաձայնությունների կայացումը: Հատկանշական է, որ զարգացած տնտեսություն ունեցող երկրներում պայքարը հակամրցակցային համաձայնությունների դեմ հանդիսանում է հակամենաշնորհային մարմինների գործունեության ամենահիմնական ուղղություններից մեկը:

Հայաստանում, սակայն, հազվադեպ են հանդիպում հակամրցակցային համաձայնության կայացման համար պատասխանատվության կիրառման դեպքեր: Սա ամենևին չի ենթադրում, որ հակամրցակցային համաձայնությունների կայացումը հազվադեպ երևույթ է ապրանքային շուկայում: Ընդհակառակը, ապրանքների սեզոնային (օրինակ՝ որոշակի տոների նախօրյակներին) տարեցտարի կրկնվող թանկացումները, որոշակի ապրանքային շուկաներում տնտեսվարող սուբյեկտների կազմի անփոփոխ լինելը, այն պարագայում, երբ այդ ապրանքային շուկաները շահութաբեր են, հիմք է տալիս ենթադրելու, որ խնդիրը ոչ թե հակամրցակցային համաձայնությունների հազվադեպ լինելն է, այլ դրանց չբացահայտելը:

Մրցակցության ոլորտում առաջ եկող այսպիսի խնդիրների լուծման համար էլ 06 նոյեմբերի 2000 թվականին ընդունվել է «Տնտեսական մրցակցության պաշտպանության մասին» ՀՀ օրենքը (այսուհետ՝ «Օրենք»): Ի հեճուկս նրան, որ Օրենքի ընդունվելուց անցել է 13 տարուց ավելի, մինչ օրս Օրենքի ընդհանրապես և հակամրցակցային համաձայնությունների, մասնավորապես, իրավական հետազոտություն գրեթե չի իրականացվել: Դրա հետ մեկտեղ մրցակցային իրավիճակը, ըստ էության, շարունակում է նույնը մնալ:

Այնինչ, Հայաստանի Հանրապետության իրավական համակարգ է ներմուծվել լրիվ նոր ինստիտուտ՝ իրեն առանձնահատուկ հասկացություններով, կարգավորումներով: Մասնավորապես, անհրաժեշտ է վերլուծել ինչ է իրենից ներկայացնում «համաձայնություն» հասկացությունը, ինչպես է այն հարաբերակցվում «գործարք» և «պայմանագիր» հասկացությունների հետ, որոնք են հակամրցակցային համաձայնությունների մասնակիցները, ինչ կարգավիճակ

ունեն այնպիսի առանձնահատուկ սուբյեկտներ, ինչպիսիք են անձանց խումբը և առևտրային ցանցը, ինչ է ապրանքայի շուկան, ինչ չափանիշներ կիրառելով է հնարավոր տարանջատել թույլատրելի համաձայնությունները նրանցից, որոնք վնաս են հասցնում տնտեսությանը, ինչպես են հարաբերակցվում հակամրցակցային համաձայնությունները համակենտրոնացումների հետ, այդ թվում «համաձայնություն» հասկացությունը «միավորում» հասկացության հետ, արդյոք հակամրցակցային համաձայնության կայացումը պետք է դիտարկել որպես իրավունքի չարաշահում:

Այս բոլոր հարցերի հետ կապված բազմաթիվ խնդիրներ են ծագում պրակտիկ կյանքում, ուստի դրանց հրատապ լուծումը մեծ նշանակություն է ներկայացնում:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ հետազոտական թեմայի արդիականության ի հիմնավորում կարելի է բերել հետևյալ դատողությունները.

Նախ, հայաստանյան և միջազգային բազմաթիվ հետազոտություններ արձանագրում են, որ տնտեսական մրցակցությունը այն ոլորտներից է, որոնք առավել խոցելի են Հայաստանի ներկայիս իրադրությունում: Այդ խոցելիության հիմնական պատճառներից մեկն էլ օրենսդրական կարգավորումների որոշ դեպքերում ոչ հստակությունն ու վիճելի լինելն է և ընդհանրապես ամբողջ մրցակցային օրենսդրության թերի ուսումնասիրված լինելը:

Երկրորդ, զարգացած երկրներում մրցակցության կարգավորումը կախված է այդ երկրի տնտեսական հնարավորություններից, աշխարհագրական և դեմոգրաֆիական իրադրությունից, տնտեսական որոշակի ճյուղեր զարգացնելու հրամայականից, ուստի այս ոլորտի իրավական կարգավորման տրամաբանությունը մշակելիս պետք է հստակ հասկանալ տվյալ երկրի առանձնահատկությունները: Մինչդեռ Հայաստանում մրցակցության կարգավորման իրավական վերլուծության բացակայության պայմաններում օրենսդրական բարեփոխումները հիմնականում կատարվում են արտասահմանյան մոտեցումների և գաղափարների կիրառմամբ: Այսպիսի իրադրությունը չի կարելի համարել արդարացված: Որոշակի գաղափարներ որոնք մշակվել են մեծ տարածք և ձևավորված տնտեսություն ունեցող երկրների համար, կարող է իրենց դրական ազդեցությունը չունենան փոքր և նոր ձևավորվող տնտեսությամբ երկրների պարագայում: Այդ իսկ պատճառով պետք է մշակել մրցակցության իրավական կարգավորման այնպիսի կառուցակարգ, որը կհամապատասխանի հայկական իրավիճակին և կնպաստի տնտեսության զարգացմանը:

Երրորդ, Օրենքի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ առկա իրադրությունը բավարար չէ հակամրցակցային համաձայնությունների համապարփակ կարգավորման համար, և այդպիսի կարգավորումները խնդիրներ կարող են առաջացնել պրակտիկ կիրառության ընթացքում:

Բազմաթիվ թերություններից կարելի է նշել, մասնավորապես, հետևյալները. հակամրցակցային համաձայնությունները բաժանվում են հորիզոնականի, ուղղահայացի և խառը տեսակների, և հստակ չէ ուղղահայաց և խառը հակամրցակցային համաձայնությունների տարբերակման անհրաժեշտությունը: Թվարկելով այն տեսակները, որոնցով կարող է դրսևորվել հակամրցակցային համաձայնությունը, Օրենքը առանձին նշում է «համաձայնություն» և «գործարք» հասկացությունները: Օրենքը չի տալիս այն հստակ չափանիշները, որոնք հնարավորություն կտան առանձնացնել հակամրցակցային այն համաձայնությունները, որոնք ուղղակի վնաս են հասցնում ապրանքային շուկաներին, նրանցից, որոնք կարող են նպաստել տնտեսության զարգացմանը: Հակամրցակցային համաձայնությունները շատ դեպքերում վնաս են պատճառում տնտեսությանը, սակայն հնարավոր են իրավիճակներ, երբ պետությունը շահագրգռված լինի այս կամ այն ոլորտում կայացված հակամրցակցային համաձայնությունը թույլատրելի դիտել, քանի որ դա կնպաստի, օրինակ, միջազգային շուկայում հայկական ապրանքների մրցունակության բարձրացմանը:

Պետք է նշել, որ արևմտյան իրավաբանական գրականությունը բավական խորությամբ ուսումնասիրում է տնտեսական մրցակցության իրավական կարգավորման հիմնախնդիրներն ընդհանրապես և հակամրցակցային համաձայնությունները մասնավորապես: Հետխորհրդային տարածաշրջանում մրցակցության կարգավորումը իրավական ուսումնասիրությունների նոր ոլորտ է, սակայն վերջերս այն բավականին մեծ ուշադրության է արժանանում, հատկապես Ռուսաստանի Դաշնությունում և Ուկրաինայում:

Հետազոտության թեմայի մշակվածության աստիճանը: Տնտեսական մրցակցության իրավական կարգավորման հայաստանյան օրենսդրության և հակամրցակցային համաձայնությունների համապարփակ տեսական վերլուծություն մինչ այս պահը գրեթե չի կատարվել: Դա առաջին հերթին կապված է սույն օրենսդրական ոլորտի նոր լինելու հետ:

Որպես եզակի ուսումնասիրություններ կարելի է առանձնացնել Դ. Մերոբյանի կողմից ՀՀ սահմանադրության 33.1 հոդվածի մեկնաբանությունը, որը տեղ է գտել 2010 թվականին հրատարակված Հայաստանի Հանրապետության սահմանադրության մեկնաբանություններում և Գ. Գևորգյանի իրավաբանական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսությունը «Համակենտրոնացման իրավական կարգավորման հիմնախնդիրները Եվրոպական Միությունում», որտեղ ԵՄ օրենսդրության համեմատությամբ որոշակի դիտարկումներ են կատարվում նաև ներպետական օրենսդրության, հիմնականում համակենտրոնացումների կարգավորման, վերաբերյալ:

Վերջին ժամանակաշրջանում, ինչպես նշվեց, մեծ հետաքրքրություն

մրցակցային օրենսդրության նկատմամբ, ցուցաբերվում է Ռուսաստանի Դաշնությունում և Ուկրաինայում: Որպես տվյալ ոլորտն ուսումնասիրող գիտնականներ արժանի են հիշատակվելուն Ռ. Ազանյան, Ն. Կլեյնը, Ի. Շկարեդյոնոկը, Ս. Պարաշչուկը, Ս. Վալիտովը, Ա. Վարլամովան, Կ. Տոսյը:

Հետազոտության տեսական հիմքը: Հետազոտությունը հիմնվել է գիտության այնպիսի ճյուղերի վրա, ինչպիսիք են քաղաքացիական իրավունքը, գործարարական իրավունքը, իրավական ուսմունքների պատմությունը, իրավունքի տեսությունը, միկրոտնտեսագիտությունը: Ատենախոսության մեջ օգտագործվել են ինչպես ռուսական, այնպես էլ արտասահմանյան տեսաբանների աշխատություններ: Մասնավորապես, ատենախոսությունում օգտագործվել են հետևյալ ռուսաստանյան հեղինակների աշխատություններ՝ Ս. Ավդաշևը, Ի. Արտեմյևը, Օ. Բելայևը, Ս. Բրազինսկին, Յու. Բուրլինովը, Դ. Գորոխովը, Վ. Գրիբանովը, Վ. Գուշչինը, Վ. Երեմենկոն, Ի. Երեմիչևը, Յու. Երշովան, Լ. Էնտինը, Ն. Էրիաշվիլին, Գ. Թոսունյանը, Օ. Ժիդկովը, Ս. Ժիլինսկին, Մ. Իբրագիմովան, Պ. Իզբրեխտը, Վ. Կիզիլովը, Ա. Կինևը, Ն. Կլեյնը, Մ. Կոզլովան, Ն. Կորշունովը, Օ. Կրասավչիկովը, Մ. Կրատենկոն, Մ. Մարչենկոն, Ե. Մուրատովան, Վ. Նովիկովը, Ա. Շաստիտկոն, Ի. Շկարեդյոնոկը, Դ. Պետրովը, Ս. Պուզիրևսկին, Ի. Ջաբուան, Ն. Ռաբինովիչը, Վ. Ռյազանցևը, Յու. Ռուբինը, Ա. Սերգևը, Ս. Սուլակշինը, Ա. Սուլակշինան, Ա. Սուշկևիչը, Ս. Վալիտովը, Ա. Վարլամովան, Վ. Վիտրյանսկին, Վ. Վոլկովը, Յու. Տոլստոյը, Կ. Տոսեր, Դ. Տուզովը, Ի. Ուլյանովը, Ե. Ուսենկոն, Ն. Ֆոնարյովան:

Հետազոտության ժամանակ ուսումնասիրվել են նաև հետևյալ արևմտյան գիտնականների աշխատանքները՝ Ե. Ալտվատերը, Ռ. վան դեր Բերգը, Ս. Բիտոն-Վելլը, Ռ. Բորկը, Գ. Դաննեկերը, Ա. Դոմինիկը, Վ. Էմերիխը, Ա. Լոունֆելդը, Ս. Կոլինոն, Մ. Մասիմոն, Լ. Մորանդին, Լ. Սքոթովանը, Օ. Յանսենը, Ս. Նեշը, Ա. Ջոնսը, Մ. Պորտերը, Դ. Ռիդպետը, Ռ. Սալսմանը, Բ. Սուֆրինը, Ի. Սիմոնսոնը, Մ. Սիրագուսան, Լ. Էնեկցերուսը, Մ. Ֆուրսը:

Հետազոտության նորմատիվ հիմքը: Հետազոտության նորմատիվ հիմք են ծառայել ՀՀ սահմանադրությունը, ՀՀ քաղաքացիական օրենսգրքը, «Տնտեսական մրցակցության պաշտպանության մասին» ՀՀ օրենքը, «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքը, «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքը, ԵՄ հիմնադիր պայմանագրերը և մրցակցության կարգավորմանը վերաբերող ԵՄ իրավական ակտերը, ԱՄՆ Շերմանի և Բլեյտոնի օրենքները, Մրցակցության մասին ՌԴ դաշնային օրենքը:

Հետազոտության փորձառնական հիմքը: Հետազոտության փորձառնական հիմք են կազմել ՀՀ Տնտեսական մրցակցության պաշտպանության պետական հանձնաժողովի, ՀՀ դատարանների, ԵՄ դատարանի, ԵՄ հանձնաժողովի, ԱՄՆ դատարանների պրակտիկան:

Հետազոտության մեթոդաբանական հիմքը: Ուսումնասիրություն

իրականացնելիս լայնորեն կիրառվել են հետազոտման դիալեկտիկ, պատմական, համեմատական, մոդելավորման մեթոդները: Ուսումնասիրվել է ինչպես Հայաստանի Հանրապետությունում մրցակցության իրավական կարգավորման զարգացումը, այնպես էլ արտասահմանյան երկրներում մրցակցության կարգավորման պատմությունը և առանձնահատկությունները: Հետազոտության այսպիսի տրամաբանությունը հնարավորություն է տվել վերհանել այն կարգավորումները, որոնք առավել արդյունավետ կլինի կիրառել Հայաստանի տնտեսական պայմաններում:

Ատենախոսության ուսումնասիրման օբյեկտը և առարկան: Հետազոտության օբյեկտը այն հարաբերություններն են, որոնք ծագում են մրցակցության և հակամրցակցային հարաբերությունների կարգավորման ընթացքում: Հետազոտության առարկան են կազմում օրենսդրական այն նորմերը, որոնք կարգավորում են հակամրցակցային հարաբերությունների հետ կապված հասարակական հարաբերությունները:

Հետազոտության նպատակը և խնդիրները: Ատենախոսության նպատակն է Հայաստանի համար նոր հանդիսացող ճյուղի՝ տնտեսական մրցակցության իրավական կարգավորման ընդհանուր օրինաչափությունների և հիմնական հասկացությունների վերլուծությունը և դրա շրջանակներում հակամրցակցային համաձայնությունների կարգավորման արդյունավետ կառուցակարգերի մշակումը:

Ինչպես նշվեց, տնտեսական մրցակցության իրավական կարգավորումը բավականին թույլ ուսումնասիրված ոլորտ է Հայաստանի Հանրապետությունում: Ուստի զուտ հակամրցակցային համաձայնությունների կարգավորումն ուսումնասիրելուց զատ, փորձ է կատարվել նաև ներկայացնել ընդհանուր տնտեսական մրցակցության իրավական կարգավորման վերաբերյալ գաղափարները և մոտեցումները:

Հակամրցակցային համաձայնությունների կարգավորման արդյունավետ մեխանիզմի վերլուծության որպես հետևանք ատենախոսության մեջ ներկայացված են մի շարք առաջարկություններ, որոնք վերաբերում են ինչպես օրենքներում փոփոխություններին, այնպես էլ գործող կարգավորումների արդյունավետ կիրառմանը:

Ներկայացված նպատակներն իրագործելու համար խնդիր է դրվել՝

- Ուսումնասիրել տնտեսական մրցակցության իրավական կարգավորման նպատակները և առաջարկել այն օպտիմալ լուծումները, որոնք առավել կհամապատասխեն Հայաստանի տնտեսական վիճակին,
- Վերլուծել «համաձայնություն» հասկացության իրավական բնույթը,
- Վերլուծել ապրանքային շուկայի դրա ապրանքատեսակային և աշխարհագրական սահմանների հասկացությունը, այդ սահմանները որոշելու մեթոդները,

- Ուսումնասիրել հակամրցակցային համաձայնությունների մասնակիցների իրավական վիճակը,

- Ուսումնասիրել հակամրցակցային համաձայնությունների բովանդակությունը, և այն չափանիշները, որոնց հիման վրա որոշակի համաձայնություն կարող է դիտարկվել հակամրցակցային,

- Ուսումնասիրել հակամրցակցային համաձայնությունների դասակարգումը և դրսևորման ձևերը,

- Վերհանել այն չափանիշները, որոնք հնարավորություն են տալիս տարբերակել հակամրցակցային համաձայնությունները մրցակցությանը վնաս հասցնող այլ գործողություններից,

- Վերլուծել հակամրցակցային համաձայնություն կայացնելու համար վրա հասնող պատասխանատվությունը:

Ատենախոսության գիտական նորույթը: Սույն ատենախոսությունը հանդիսանում է հակամրցակցային համաձայնությունների իրավական կարգավորումը վերլուծող առաջին հետազոտությունը:

Ատենախոսության գիտական նորույթը կայանում է նրանում, որ վերլուծվել են հակամրցակցային համաձայնությունների հասկացությունը, դրսևորման ձևերը, տեսակները, թույլատրելիության չափանիշները, պատասխանատվությունը: Այդ վերլուծությունների հիման վրա էլ առաջարկվել են օրենսդրական փոփոխություններ:

Պաշտպանության ներկայացվող դրույթները: Հետազոտության արդյունքում պաշտպանության են դրվում հետևյալ դրույթները.

1. Օրենքի 5-րդ հոդվածը հակամրցակցային համաձայնության սահմանումը տալուց կիրառում է և՛ «համաձայնություն», և՛ «գործարք», և՛ «համաձայնեցված գործողություն» հասկացությունները: Աշխատանքում ուսումնասիրվում է այս հասկացությունների նշանակությունը: Նշվում է, որ այս դեպքում «համաձայնություն» տերմինը ավելի լայն է, քան «երկկողմանի կամ բազմակողմ գործարքը», և ներառում է, ոչ միայն այն համաձայնությունները, որոնք ուղղված են քաղաքացիական իրավունքներ կամ պարտականություններ ստեղծելուն, փոփոխելուն կամ դադարեցնելուն (քաղաքացիաիրավական պայմանագիր՝ երկկողմանի կամ բազմակողմ գործարք), նաև նրանք, որոնք չառաջացնելով քաղաքացիաիրավական հետևանքներ, որոշակիորեն ֆիքսում են անձանց կամքը գործել որոշակի ձևով: Հետևաբար, հակամրցակցային համաձայնությունների լեգալ բնորոշման մեջ «գործարք» հասկացության կիրառությունն ավելորդ է և կարող է անտեղի շփոթ առաջացնել: Մյուս կողմից, հակամրցակցային համաձայնությունների տարբերակումը «համաձայնության» և «համաձայնեցված գործողության» պետք է դիտարկել Օրենքի 5-րդ հոդվածի 5-րդ մասի տրամաբանության շրջանակներում. այն դեպքում, երբ առկա է համաձայնություն կայացնելու վերաբերյալ որևէ փաստ, այլև անհրաժեշտություն

չկա պատասխանատվություն կիրառելու համար սպասելու որպեսզի հակամրցակցային համաձայնության մասնակիցները դրսևորեն համաձայնեցված վարքագիծ: Իսկ այն պարագայում, երբ առկա է համաձայնեցված գործողություն, լիազոր մարմինը պարտավոր չէ ապացուցել համաձայնություն կայացնելու փաստը:

2. Օրենքը որևէ դրույթ չի պարունակում մրցակցային օրենսդրության արտատարածքային՝ էքստերիտորիալ, կիրառելիության վերաբերյալ, այսինքն՝ չի հստակեցնում ինչպես պետք է վարվի պետական լիազոր մարմինը, եթե հակամրցակցային համաձայնությանը մասնակցում են արտասահմանյան սուբյեկտներ: Առաջարկվում է արտասահմանյան սուբյեկտների մասնակցությամբ համաձայնությունը Օրենքի տեսանկյունից դիտարկել հակամրցակցային, եթե՝

- Այդ արտասահմանյան սուբյեկտը հանդիսանում է հայկական ապրանքային շուկայի մասնակից, կամ

- Այդ համաձայնությունը վերաբերում է Հայաստանում գտնվող նյութական բարիքներին:

3. Օրենքը հակամրցակցային համաձայնությունների թույլատրելիության որևէ հստակ չափանիշ չի տալիս՝ սահմանափակվելով միայն «մրցունակության ապահովում կամ բարձրացում», «տեխնիկական կամ տնտեսական առաջընթաց», «արտադրության խթանում» և նմանատիպ այլ ոչ հստակ հասկացություններով: Ուսումնասիրելով արտասահմանում կիրառելի մոտեցումները՝ առաջարկվում է Հայաստանում կիրառել ԵՄ և ԱՄՆ իրավական համակարգերում մշակված *de minimis*, *per se*, *rule of reason* կանոնների և բացառությունների համակարգի՝ տեղական պայմանների համար համապատասխանեցված տարբերակը, ինչպես նաև առավել հստակ տարբերակել հակամրցակցային համաձայնությունների կայացման տեսակները՝ հորիզոնականի և ուղղահայացի՝ հաշվի առնելով դրանց համար թույլատրելիության տարբերակված մոտեցումներ կիրառելու անհրաժեշտությունը:

4. Համեմատելով գերիշխող դիրքի և հակամրցակցային համաձայնությունների կարգավորումը՝ նշվում է, որ Հայաստանի Հանրապետությունում կիրառվող կոլեկտիվ գերիշխող դիրքի ինստիտուտը քննադատության է արժանանում արտասահմանյան իրավական գրականությունում, քանի որ այն մի կողմից բավականին մեծ լծակներ է տալիս լիազոր մարմնին, մյուս կողմից կարող է հանգեցնել հակամրցակցային համաձայնությունների հետ անտեղի շփոթի: Հաշվի առնելով դա՝ առաջարկվում է Հայաստանում չկիրառել այս իրավակարգավորումը՝ առավել ևս, որ Օրենքի 2011թ.-ի փոփոխությունների արդյունքում այժմ գերիշխող դիրքի որոշման համար կիրառելի է ոչ միայն «քանակական», այլև «որակական չափանիշը»:

5. Օրենքի 8-րդ հոդվածը, բնութագրելով համակենտրոնացումների տեսակները, նշում է, որ համակենտրոնացում է համարվում նաև տնտեսվարող սուբյեկտների այնպիսի «միավորումը», որի շնորհիվ մեկ տնտեսվարող սուբյեկտ կարող է ուղղակիորեն կամ անուղղակիորեն ազդել մեկ ուրիշի որոշումների կայացման կամ մրցունակության վրա: Այսպիսի հասկացության սահմանումը անհրաժեշտություն է առաջացնում հստակեցնել հակամրցակցային համաձայնությունների և այս տեսակի համակենտրոնացումների տարբերակումը: Նշվում է, որ «միավորում» տերմինին համապատասխանում է ԵՄ օրենսդրության մեջ կիրառվող «joint venture» հասկացությունը, և համակենտրոնացում պետք է համարել միայն «full function joint venture»-ները՝ այսինքն նրանք, որոնց շրջանակներում կողմերը պայմանավորվում են երկարաժամկետ միավորել իրենց ֆունկցիաները այնպես, որ առկա լինի այնպիսի կառավարում, որը ուղղված է ղեկավարելու միավորման առօրյա գործառնությունները:

6. Հակամրցակցային համաձայնությունը կարող է կայացվել նաև գործարքի տեսքով: Այս պարագայում պետք է հղում կատարել օրենքին հակասող գործարքների կարգավորումներին: Արտասահմանյան պրակտիկայի ուսումնասիրությունը հիմնավորում է, որ առավել տարածված է օրենքին հակասող գործարքների «առոչընչության կանխավարկածը»: Հաշվի առնելով դա՝ առաջարկվում է այն դեպքերի համար, երբ հակամրցակցային համաձայնությունը կայացվում է գործարքի տեսքով, որպես հետևանք կիրառել առոչընչությունը ոչ թե վիճահարույցությունը, ինչն առավել բարենպաստ կլինի այն անձանց իրավունքները պաշտպանելու համար, որոնք տուժել են հակամրցակցային համաձայնություն կայացնելու հետևանքով:

7. Հակամրցակցային համաձայնության կայացումը ըստ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 12-րդ հոդվածի դիտարկվում է որպես իրավունքի չարաշահում: Այս մոտեցումը քննադատության է ենթարկվում: Իրավունքի չարաշահում առկա է այն պարագայում, երբ անձն իրականացնում է օրենքով իրեն վերապահված լիազորությունը, բայց ոչ իրավաչափ ձևով, ուստի իրավունքի չարաշահման մասին կարելի է խոսել այն պարագայում, երբ անձն ունի իրավունք, այսինքն, երբ բացակայում է իրավախախտման որոշակի ձև նախատեսող հատուկ նորմ: Հակամրցակցային համաձայնություն կայացնելու, գերիշխող դիրք չարաշահելու, անբարեխիղճ մրցակցության վարքագիծ դրսևորելու համար օրենսդրությամբ արդեն իսկ նախատեսված է պատասխանատվություն: Ուստի նշված գործողությունները չի կարելի դիտարկել որպես իրավունքի չարաշահում, քանի որ սվյալ գործողությունները արդեն իսկ հակաիրավական են:

Ատենախոսության տեսական նշանակությունը: Ատենախոսության մեջ տեսական մակարդակով վերլուծվում են հակամրցակցային

համաձայնությունների կարգավորման վերաբերյալ առկա տեսական մոտեցումները, այդ թվում ուսումնասիրվում է համաձայնություն և գործարք հասկացությունները, գործարքի անվավերության հետևանքները, հակամարցակցային համաձայնությունների և իրավունքի չարաշահման հարաբերակցությունը: Բացի այդ ուսումնասիրվում է ոչ միայն նեղ հակամրցակցային համաձայնությունների կարգավորումը, այլև տրվում են ընդհանուր մրցակցության իրավական կարգավորման վերլուծությունը: Այս առումով ատենախոսությունը կարող է նպաստել ինչպես հակամրցակցային համաձայնությունների իրավական վերլուծության, այնպես էլ ընդհանրապես տնտեսական մրցակցության իրավական կարգավորման վերաբերյալ հետազոտությունների կատարմանը:

Ատենախոսության գործնական նշանակությունը: Ատենախոսության մեջ առկա եզրահանգումների գործնական նշանակությունը կարելի է բաժանել երկու մասի: Նախ, տրվում են օրենսդրության մեջ առկա որոշակի հասկացությունների և որոշակի կարգավորումների մեկնաբանություններ և բացատրություններ: Այս առումով ատենախոսությունը կարող է նպաստել ինչպես պետական մարմինների այնպես էլ մասնավոր սուբյեկտների կողմից տնտեսական մրցակցությունը կարգավորող օրենսդրության առավել հստակ հասկանալուն: Երկրորդ, առկա հետազոտությունը կարող է հետագայում ծառայել ՀՀ օրենսդրության կատարելագործման համար:

Հետազոտության արդյունքների փորձարկումը: Ատենախոսությունը պատրաստվել է Երևանի պետական համալսարանի քաղաքացիական իրավունքի ամբիոնում, որտեղ և քննարկվել է: Ատենախոսության հիմնական դրույթները հրապարակվել են 2010-2014 թվականներին հրապարակված հեղինակի 6 գիտական հոդվածներում:

Ատենախոսության ծավալը և կառուցվածքը: Ատենախոսությունը կատարված է ՀՀ ԲՈՀ-ի կողմից սահմանած ծավալով և կազմված է ներածությունից, երեք գլուխներից, որոնք ներառում են ութ պարագրաֆներ, եզրակացությունից և օգտագործված գրականության ցանկից:

Ատենախոսության հիմնական բովանդակությունը

Ներածության մեջ հիմնավորվում է հետազոտության թեմայի արդիականությունը, մշակվածության աստիճանը, հետազոտության տեսական, նորմատիվ, փորձառնական, մեթոդոլիական հիմքերը, ատենախոսության օբյեկտը և առարկան, հետազոտության նպատակը և խնդիրները, գիտական նորույթը, ձևակերպվում են պաշտպանության ներկայացվող հիմնական դրույթները, հետազոտության տեսական և գործնական նշանակությունը և հետազոտության արդյունքների փորձարկումը:

Առաջին գլուխ՝ «Համաձայնությունների դերը ապրանքային շուկայում,

դրանց իրավական կարգավորման նպատակը», կազմված է երեք պարագրաֆից, որոնք վերաբերում են «համաձայնություն» հասկացությանը, հակամրցակցային համաձայնությունների կարգավորման նպատակին և ապրանքային շուկայի նկարագրությանը:

Առաջին գլխի առաջին պարագրաֆում՝ «Համաձայնություն» հասկացության ընդհանուր բնութագիրը և այն կարգավորող օրենսդրությունը», նկարագրվում է «համաձայնություն» հասկացության էությունը և բովանդակությունը, հարաբերակցությունը «գործարք» և «պայմանագիր» հասկացությունների հետ: Օրենքի 5-րդ հոդվածի համաձայն՝ հակամրցակցային համաձայնությունը կարող է կայացվել «համաձայնության, գործարքի, համաձայնեցված գործողության» ձևով: Նշվում է, որ ցանկացած համաձայնություն ենթադրում է երկու կամ ավելի սուբյեկտների առկայություն: ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 436 հոդվածի 1-ին մասի համաձայն պայմանագիր է երկու կամ մի քանի անձանց համաձայնությունը, որն ուղղված է քաղաքացիական իրավունքներ և պարտականություններ սահմանելուն, փոփոխելուն կամ դադարելուն: Ըստ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 289 հոդվածի գործարքները քաղաքացիների և իրավաբանական անձանց այն գործողություններն են, որոնք ուղղված են քաղաքացիական իրավունքներ և պարտականություններ սահմանելուն, փոփոխելուն կամ դրանց դադարելուն: Նշված նորմերի վերլուծության հիման վրա, կարելի գալ հետևյալ եզրակացություններին. եթե համաձայնությունը կայացվում է գործարքի ձևով, այն կարող է լինել միայն պայմանագիր: Բացի դրանից համաձայնությունը կարող է նաև չլինել գործարք, այսինքն կարող է չառաջացնել քաղաքաիիրավական հետևանքներ:

Հիմք ընդունելով արտասահմանյան իրավական պրակտիկայում և գրականության մեջ արտահայտած կարծիքները, «համաձայնություն» հասկացության իրավաբանական և լեզվաբանական բնորոշումները, կարելի է գալ եզրակացության, որ Օրենքի 5-րդ հոդվածի իմաստով այն օգտագործվում է ինչպես այն համաձայնությունների նկարագրության համար, որոնք ուղղված են քաղաքացիական իրավունքներ սահմանելուն, դադարեցնելուն, փոփոխելուն, այնպես էլ նրանց, որոնք հիմնված են ոչ թե անձանց իրավաբանական պարտականությունների վրա, այլ որոնք թեկուզ չեն սահմանում, փոփոխում, դադարեցնում քաղաքացիական իրավունքներ և պարտականություններ, սակայն ֆիքսում են կողմերի փոխադարձ կամքը որոշակի երևույթի վերաբերյալ:

Առաջին գլխի երկրորդ պարագրաֆում՝ «Հակամրցակցային համաձայնությունների իրավական կարգավորման անհրաժեշտությունը և նպատակը», նկարագրվում են մրցակցության կարգավորման ոլորտում պետության դերի վերաբերյալ առկա գիտական կոնցեպցիաները՝ ֆիզիոկրատներ, մերկանտիլիստներ, լիբերալիստներ, որդոլիբերալիստներ:

Տրվում է ինչպես մրցակցության կարգավորման անհրաժեշտության նկարագրությունը, այնպես էլ մրցակցության իրավական կարգավորման վերաբերյալ առկա իրավական և տնտեսական քննադատությունը: Նկարագրվում են մրցակցության կարգավորման հիմնական սկզբունքները, որոնք մի կողմից հնարավորություն կտան հասնել արդյունավետ արդյունքների, մյուս կողմից թույլ չեն տա վնաս հասցնել տնտեսությանը այն չափից դուրս կարգավորելու միջոցով. առաջին հերթին, օրենսդրության հիմնական նպատակը պետք է լինի ոչ թե առանձին արարքների համար պատիժը, այլ այնպիսի մրցակցային իրավիճակի ստեղծումը որտեղ հակամրցակցային գործելաձևի հավանականությունը կհասցվի նվազագույնի զուտ տնտեսական գործոնների ազդեցության շնորհիվ: Երկրորդ, հակամենաշնորհային քաղաքականություն վարելիս, առաջին հերթին պետք է ելնել տվյալ երկրի իրադրությունից, այլ ոչ թե մեխանիկորեն կիրառել արտասահմանյան երկրների կոնցեպցիաները: Երրորդ, մրցակցային օրենսդրությունը պետք է կիրառի տարբերակված մոտեցում տարբեր ճյուղերի նկատմամբ՝ հաշվի առնելով տվյալ ճյուղերի նշանակությունը պետության տնտեսությունում:

Նշվում է, որ մրցակցային օրենսդրության նպատակները կարելի է բաժանել երկու մասի՝ սպառողների իրավունքների պաշտպանություն և տնտեսվարող սուբյեկտների հավասարության ապահովում: Նշված նպատակների միջև հակասության դեպքում, առաջնությունը պետք է տրվի տնտեսվարող սուբյեկտների հավասարության ապահովմանը՝ շուկա մուտքի խոչընդոտները վերացնելու միջոցով:

Առաջին գլխի երրորդ պարագրաֆում՝ «Ապրանքային շուկայի հասկացությունը», նկարագրվում է ապրանքային շուկայի հասկացությունը, վերջինիս ապրանքատեսակային և աշխարհագրական սահմանները: Նկարագրվում և հարաբերակցվում են Հայաստանի Հանրապետության և Եվրոպական Միության օրենսդրություններում կիրառվող մոտեցումները:

Վերլուծվում է «իրացում» հասկացությունը, որը կիրառվում է Օրենքում «ապրանք» հասկացության նկարագրության ժամանակ: Նշվում է, որ այս տերմինի տակ պետք է հասկանալ ապրանքների, ծառայությունների, աշխատանքների ինչպես հատուցելի, այնպես էլ անհատույց օտարումը, մատուցումը, կատարումը: Սակայն Օրենքը, ապրանքային շուկայի և նրա աշխարհագրական սահմանի նկարագրության ժամանակ օգտագործում է «գնորդ» հասկացությունը, ինչը կարող է բերել «իրացում» հասկացության սխալ ընկալմանը: Դրանից ելնելով՝ առաջարկվում է կիրառել «ձեռք բերող» ոչ թե «գնորդ» հասկացությունը:

Բացի դրանից, այս պարագրաֆում նկարագրվում է մրցակցության հասկացությունը՝ երկու ընկալմամբ՝ որպես գործընթաց և որպես իրավիճակ: Օրենքը նշված հասկացությունը կիրառում է գործընթաց իմաստով՝ նշելով, որ

մրցակցություն է «ապրանքների իրացման կամ ձեռքբերման առավել նպաստավոր պայմանների ապահովմանն ուղղված տնտեսական գործունեություն, որի արդյունքում օբյեկտիվորեն սահմանափակվում են տվյալ ապրանքային շուկայում ապրանքների շրջանառության ընդհանուր պայմանների վրա մրցակիցներից յուրաքանչյուրի միակողմանի ազդելու հնարավորությունները»: Մրցակցության այս բնորոշումը չի կարելի համարել լրիվ, քանի որ այն չի ենթադրում, որ մրցակցությունը պայքար է հենց տնտեսվարող սուբյեկտների միջև:

Երկրորդ գլուխը՝ «Ապրանքային շուկայում կնքվող հակամրցակցային համաձայնությունների տարրերը», բաղկացած է երեք պարագրաֆից, նվիրված է հակամրցակցային համաձայնությունների սուբյեկտներին, կայացման ձևերին, տեսակներին, թույլատրելիությանը:

Երկրորդ գլխի առաջին պարագրաֆում՝ «Հակամրցակցային համաձայնությունների մասնակիցների բնութագիրը», նկարագրվում է հակամրցակցային համաձայնությունների հնարավոր մասնակիցների կարգավիճակը:

Օրենքի 4-րդ հոդվածի համաձայն տնտեսվարող սուբյեկտներ են հանդիսանում արտոնագրային վճար վճարողները, անհատ ձեռնարկատերերը, իրավաբանական անձինք, այլ կազմակերպությունները, դրանց ներկայացուցիչները, ներկայացուցչությունները կամ մասնաճյուղերը, անձանց խումբը, առևտրային ցանցը:

Այս սահմանումը բավականին վիճալի է: Նախ, Օրենքը հակամրցակցային համաձայնության մասնակցի հասկացությունը կապում է որոշակի կարգավիճակ ունենալու հետ: Ստացվում է, որ անհատ ձեռնարկատիրոջ կարգավիճակ չունեցող ֆիզիկական անձը չի կարող համարվել հակամրցակցային համաձայնության մասնակից, նույնիսկ եթե իրականացնում է ձեռնարկատիրական գործունեություն առանց գրանցման: Երկրորդ, անհասկանալի է՝ ինչ նկատի ունի օրենսդիրը իրավաբանական անձ չհանդիսացող «այլ կազմակերպություն» եզրույթի տակ: Երրորդ, ՀՀ քաղաքացիական օրենսգրքի շրջանակներում բավականին վիճելի է ներկայացուցչին, ներկայացուցչությունը և մասնաճյուղը որպես առանձին սուբյեկտ դիտելը:

Հաշվի առնելով դա՛ գրականության մեջ հանդիպում են տեսակետներ, որոնք առաջարկում են տնտեսվարող սուբյեկտին բնորոշել որպես անձ, որն իրականացնում է շահույթ ստանալու նպատակ հետապնդող գործունեություն: Բայց մյուս կողմից, մրցակցային հարաբերությունները ենթադրում են այնպիսի առանձնահատուկ սուբյեկտների առկայություն, ինչպիսիք են անձանց խումբը և առևտրային ցանցը: Եթե ընդունվի վերոնշյալ սահմանումը, այսպիսի սուբյեկտները չեն դիտարկվի որպես տնտեսվարող սուբյեկտներ Օրենքի

իմաստով և չեն կարողանա լինել հակամրցակցային համաձայնությունների մասնակից:

Այդ իսկ պատճառով առաջարկվում է ընդունել տնտեսվարող սուբյեկտի հետևյալ հասկացությունը՝ անձ, որն իրականացնում է շահույթ ստանալու նպատակով գործունեություն, ինչպես նաև անձանց խումբը և առևտրային ցանցը:

Օրենքը նաև չի կարգավորում այն իրավիճակները, երբ հակամրցակցային համաձայնության մասնակից է հանդիսանում արտասահմանյան սուբյեկտը: Արտասահմանյան օրենսդրական ակտերի և իրավաբանական կոնցեպցիաների վերլուծության արդյունքում, առաջարկվում է արտասահմանյան սուբյեկտների մասնակցությամբ համաձայնությունը դիտել հակամրցակցային, եթե

- Այդ արտասահմանյան սուբյեկտները հանդիսանում են հայկական ապրանքային շուկաների մասնակից,
- Նշված համաձայնությունը վերաբերում է Հայաստանում գտնվող նյութական բարիքներին:

Երկրորդ գլխի երկրորդ պարագրաֆում՝ «Հակամրցակցային համաձայնությունների բովանդակությունը և կայացման ձևերը», բնութագրվում է որ դեպքերում համաձայնությունը պետք է համարվի հակամրցակցային:

Առաջարկվում է հակամրցակցային դիտել այն համաձայնությունները, որոնք չեն համապատասխանում մրցակցային օրենսդրության նպատակներին, այսինքն վնաս են հասցնում սպառողներին կամ սահմանափակում են ապրանքային շուկայի մասնակից տնտեսվարող սուբյեկտների հավասարությունը:

Օրենքի 5-րդ հոդվածը տալիս է այն ձևերը, որոնցով կայացվում են հակամրցակցային համաձայնությունները՝ համաձայնություններ, գործարքներ, համաձայնեցված գործողությունները, տնտեսվարող սուբյեկտների միավորումների որոշումներ:

Հիմք ընդունելով աստենախոսության առաջին գլխի առաջին պարագրաֆում կատարված հետազոտությունը՝ առաջարկվում է չկիրառել գործարքը որպես հակամրցակցային համաձայնության կայացման ձև, քանի որ գործարքն Օրենքի 5-րդ հոդվածի իմաստով կիրառվում է բնութագրելու համար քաղաքացիաիրավական պայմանագիրը, իսկ համաձայնություն եզրույթն արդեն իսկ ներառում է ինչպես քաղաքացիաիրավական պայմանագրերը, այնպես էլ այն համաձայնությունները, որոնք չեն հանդիսանում այդպիսին: Հետևաբար, գործարք հասկացության կիրառումը համաձայնություն հասկացության հետ մեկտեղ կարող է հանգեցնել որոշակի շփոթի:

Վերլուծելով հակամրցակցային համաձայնությունների կայացման ձևերից համաձայնեցված գործողությունը՝ նշվում է, որ Օրենքը չի տալիս այն չափանիշները, որոնցով հնարավոր կլինի տարբերակել տնտեսվարող սուբյեկտների վարքագծի սովորական համընկնումը հակամրցակցային գործունեությունից:

Առաջարկվում է Օրենքում սահմանել, որ հակամրցակցային է հանդիսանում տնտեսվարող սուբյեկտների վարքագծի այնպիսի փոփոխությունը, որը կապված չէ օբյեկտիվ տնտեսական պատճառների փոփոխությունից:

Օրենքի 5-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն հակամրցակցային համաձայնությունը համարվում է ապացուցված, եթե՝

- առկա է այդ մասին վկայող որևէ փաստական տվյալ (այդ թվում՝ ցանկացած գրավոր փաստաթուղթ կամ գրավոր այլ ապացույց, տեսագրություն կամ ձայնագրություն) կամ օրենքով չարգելված ցանկացած այլ ապացույց.

- այդ մասին են վկայում տնտեսվարող սուբյեկտների գործողությունները կամ վարքագիծը:

Նշվում է, որ հակամրցակցային համաձայնությունների բաժանումը համաձայնությունների և համաձայնեցված գործողությունների պետք է կատարել հենց այս հոդվածի հիման վրա: Այսինքն, այն դեպքում, երբ լիազոր մարմինն ունի համաձայնություն (լինի դա պամանագիր կամ պայմանագիր չհանդիսացող այլ համաձայնություն) կայացնելու վերաբերյալ ապացույցներ, անհրաժեշտ չէ ապացուցել համաձայնեցված գործողության առկայությունը: Եվ ընդհակառակը, եթե լիազոր մարմինն ունի համաձայնեցված գործողությունները հիմնավորող փաստեր, համաձայնություն կայացնելու փաստն ապացուցել այլևս չի պահանջվում:

Երկրորդ գլխի երրորդ պարագրաֆում՝ «Հակամրցակցային համաձայնությունների դասակարգումը և դրանց թույլատրելիությունը», նկարագրվում են հակամրցակցային համաձայնությունների տարբերակման վերաբերյալ առկա մոտեցումները:

Նշվում է, որ հակամրցակցային համաձայնությունների դասակարգումը կատարվում է հաշվի առնելով այն փաստը, արդյոք այդ համաձայնությունների մասնակիցները գործում են նույն թե տարբեր ապրանքային շուկաներում: Դրա հիման վրա Օրենքը հակամրցակցային համաձայնությունները տարբերակում է երեք մասի՝

- որոնց մասնակիցները գործում են նույն ապրանքային շուկայում (հորիզոնական համաձայնություն),

- որոնց մասնակիցները գործում են որոշակի փոխկապակցվածություն ունեցող տարբեր ապրանքային շուկաներում (մրցակից չհանդիսացող՝ տվյալ ապրանքի և (կամ) դրա փոխադարձ փոխարինելի ապրանքներ իրացնող ու ձեռք բերող) տնտեսվարող սուբյեկտներ (ուղղահայաց համաձայնություն),

- որոնց մասնակիցները գործում են տարբեր ապրանքային շուկաներում (խառը համաձայնություն):

Այսինքն, հայկական օրենսդիրն ընդունել է ուղղահայաց հակամրցակցային համաձայնությունների բավականին նեղ ընկալում՝ ներառելով դրանց մեջ միայն նրանք, որոնք կայացվել են միևնույն ապրանքի իրացման տարբեր օղակների

մասնակիցների միջև: Դրա հետ մեկտեղ խառը և ուղղահայաց համաձայնությունների կարգավորումը միևնույնն է: Այսպիսի բաժանումը ծանրաբեռնում է օրենսդրական կարգավորումները, այդ իսկ պատճառով կարծում ենք, որ բավարար կլինեն հակամրցակցային համաձայնությունները բաժանել երկու տեսակի՝ հորիզոնականի՝ փաստացի կամ հնարավոր մրցակիցների միջև, և ուղղահայացի՝ ոչ մրցակիցների միջև, ընդ որում՝ օգտագործելով ուղղահայաց համաձայնությունների ավելի լայն ընկալում:

Ամեն դեպքում հակամրցակցային համաձայնությունների բաժանումը պետք է կատարվի դրանց թույլատրելիությունը պարզելու նպատակով: Դրա հետ մեկտեղ Օրենքը չի տալիս հակամրցակցային համաձայնությունների թույլատրելիության որևէ հստակ չափանիշներ՝ սահմանափակվելով միայն այնպիսի ոչ հստակ հասկացություններ կիրառելով, ինչպիսիք են «մրցունակության ապահովում կամ բարձրացում», «տեխնիկական կամ տնտեսական առաջընթաց», «արտադրության խթանում» և այլն: Արտասահմանյան մոտեցումների ուսումնասիրության արդյունքում առաջարկվում է Հայաստանում կիրառել *de minimis, per se, rule of reason* և խմբակային բացառությունների համակարգը՝ հիմք ընդունելով տեղական առանձնահատկությունները: Մասնավորապես, այն համաձայնությունները, որոնք ֆիքսում են գներ, բաժանում են շուկաները և գնորդներին, վերաբերում են գնումներին, պետք է ամեն դեպքում համարվեն այնթույլատրելի: Այլ համաձայնությունների համար պետք է սահմանվի այնպիսի տոկոսային շեմ, որը հիմք ընդունելով, այս կամ այն համաձայնությունը պետք է դիտարկվի թույլատրելի: Բայց նույնիսկ եթե այդպիսի համաձայնության մասնակիցները զբաղեցնեն այդպիսի տոկոսային շեմից ավել բաժին շուկայում, լիազոր մարմինը պետք է հնարավորություն ունենա այդպիսի համաձայնությունը համարել թույլատրելի, եթե գտնի կամ մասնակիցները ապացուցեն, որ այսպիսի համաձայնությունը օգտակար է շուկայի և սպառողների համար:

Երրորդ գլուխ՝ «Հակամրցակցային համաձայնություններ կայացնելու հետևանքները և հակամրցակցային վարքագծի կանխումը», կազմված է երկու պարագրաֆից և նվիրված է հակամրցակցային համաձայնությունների որակման հիմնախիռներին՝ գերիշխող դիրքի չարաշահումից և համակենտրոնացումներից տարբերակմանը, ինչպես նաև հակամրցակցային համաձայնություններ կայացնելու համար պատասխանատվությանը:

Երրորդ գլխի առաջին պարագրաֆում՝ «Հակամրցակցային համաձայնությունների տարբերակումը մրցակցությանը վնաս հասցնող այլ գործողություններից», նկարագրվում են այն չափանիշները, որոնց հիման վրա հակամրցակցային համաձայնությունները տարբերակվում են համակենտրոնացումներից և գերիշխող դիրքի չարաշահումից:

Նշվում է, որ առկա է գերիշխող դիրքի որոշման երկու չափանիշ՝

քանակական, որը հաշվի է առնում ապրանքային շուկայի բաժնեմասը, և որակական, որը հաշվի է առնում ապրանքային շուկայի իրավիճակի վրա տվյալ տնտեսվարող սուբյեկտի ազդելու հնարավորությունը: 2011 թվականից Հայաստանում գործում են այս երկու չափանիշները, ինչը թույլ է տալիս կիրառել տարբերակված մոտեցում տարբեր ապրանքային շուկաների նկատմամբ: Դրա հետ մեկտեղ Հայաստանի Հանրապետությունում մինչ այժմ գործում է կոլեկտիվ գերիշխող դիրքի ինստիտուտը, որը քննադատվում է արտասահմանյան գրականությունում, քանի որ մի կողմից տալիս է բավականին մեծ լիազորություններ պետությանը, մյուս կողմից՝ կարող է բերել հակամրցակցային համաձայնությունների հետ շփոթին: Հաշվի առնելով դա՝ առաջարկվում է չկիրառել այս ինստիտուտը, առավել ևս, որ 2011 թվականի փոփոխություններից հետո գերիշխող դիրքի որոշման համար կիրառվում է ինչպես քանակական, այնպես էլ որակական չափանիշը:

Օրենքի 8-րդ հոդվածը, նկարագրելով համակենտրոնացումների տեսակները, նշում է, որ համակենտրոնացում է հանդիսանում տնտեսվարող սուբյեկտների այնպիսի միավորումը, որի շնորհիվ մեկ տնտեսվարող սուբյեկտը կարող է ուղղակիորեն կամ անուղղակիորեն ազդել մեկ ուրիշի որոշումների կայացման կամ մրցունակության վրա: Այսպիսի հասկացության առկայությունը անհրաժեշտություն է առաջացնում տարբերակել հակամրցակցային համաձայնությունները այս տեսակի համակենտրոնացումից: «Միավորում» եզրույթին համապատասխանում է ԵՄ-ում կիրառվող «joint venture» եզրույթը, և համակենտրոնացում պետք է համարվի միայն «full function joint venture», այսինքն այնպիսի միավորումը, որի շրջանակներում պայմանավորվող կողմերը համաձայնվում են երկարաժամկետ միավորել իրենց գործառույթներն այնպես, որպեսզի դրա հիման վրա ստեղծվող միավորումը ղեկավարի իրենց առօրյա գործունեությունը:

Երրորդ գլխի երկրորդ պարագրաֆում՝ «Պատասխանատվությունը հակամրցակցային համաձայնություն կայացնելու համար», ներկայացվում է հակամրցակցային համաձայնություն կայացնելու համար առկա քաղաքացիական, քրեական, վարչական, Օրենքում ներառված պատասխանատվությունը:

Նկարագրվում են հակամրցակցային համաձայնությունների կայացման համար հետևյալ քաղաքացիաիրավական հետևանքները.

- *Գործարքի անվավերություն:* Համաձայնությունը կարող է դրսևորվել նաև գործարքի ձևով: Այս պարագայում այդպիսի գործարքը պետք է գնահատել որպես օրենքին հակասող: Ուսումնասիրելով արտասահմանյան պրակտիկայում օրենքին հակասող գործարքների վերաբերյալ առկա մոտեցումները՝ մասնավորապես «առոչընչության կանխավարկածի» հստակ ամրագրումը՝ առաջարկվում է այն դեպքերի համար, երբ հակամրցակցային

համաձայնությունը կայացվում է գործարքի տեսքով, որպես հետևանք կիրառել առոչնչությունը ոչ թե վիճահարույցությունը:

- *Վնասների հատուցումը* նույնպես կարող է կիրառվել որպես հակամրցակցային համաձայնության կայացման հետևանք:

- Այն իրավաբանական անձը, որը կնքել է հակամրցակցային համաձայնություն, կարող է նաև *հարկադիր լուծարվել*:

- Հակամրցակցային համաձայնության կայացումը ըստ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 12-րդ հոդվածի դիտարկվում է *իրավունքի չարաշահում*: Հակամրցակցային համաձայնություն կայացնելու, գերիշխող դիրք չարաշահելու, անբարեխիղճ մրցակցության վարքագիծ դրսևորելու համար օրենսդրությամբ արդեն իսկ նախատեսված է պատասխանատվություն: Ուստի նշված գործողությունները չի կարելի դիտարկել որպես իրավունքի չարաշահում, քանի որ տվյալ գործողությունները արդեն իսկ հակահրավական են:

Եզրակացությունում ուսումնասիրելով և վերլուծելով հակամրցակցային համաձայնությունների կարգավորման նպատակը, ապրանքային շուկայի հասկացությունը, հակամրցակցային համաձայնությունների կայացման ձևերը, տեսակները, մասնակիցների կարգավիճակը, պատասխանատվությունը հակամրցակցային համաձայնություն կայացնելու համար, այս ոլորտում գոյացած ինչպես տեսական, այնպես էլ գործնական մի շարք հիմնահարցերը կարգավորելու նպատակով կատարվել են **հետևյալ հիմնական եզրահանգումներն ու առաջարկությունները**.

1. «Համաձայնություն» հասկացությունն ընդգրկում է ինչպես այնպիսի համաձայնությունները, որոնք ուղղված են քաղաքացիական իրավունքներ և պարտականություններ սահմանելուն, փոփոխելուն, դադարեցնելուն (քաղաքացիաիրավական պայմանագիր՝ երկկողմանի կամ բազմակողմ գործարք), այնպես էլ նրանք, որոնք չառաջացնելով քաղաքացիաիրավական հետևանքներ, ամրագրում են կողմերի կամքը գործել որոշակի ձևով:

2. Ուսումնասիրվել են պետության կողմից տնտեսական մրցակցության կարգավորման վերաբերյալ առկա հայեցակարգերը: Այդպիսի ուսումնասիրությունները համադրելով հայաստանյան տնտեսական իրավիճակի հետ՝ տրվում է եզրակացություն, որ Հայաստանում տնտեսական մրցակցության իրավական կարգավորման հիմնական նպատակը պետք է լինի տնտեսական հարաբերություններին մասնակցող տնտեսվարող սուբյեկտների հավասարության ապահովումը՝ այդ թվում և պետության կողմից տարբեր տնտեսվարող սուբյեկտների նկատմամբ անհավասար վերաբերմունքը վերացնելու միջոցով:

3. Անհրաժեշտ է որոշակիորեն շտկել ապրանքային շուկայի հասկացությունը, մասնավորապես, «գնորդ», «ձեռք բերող», «իրացում» և «մրցակցություն» հասկացությունների հետ կապված:

4. Անհրաժեշտ է նաև որոշակիորեն շտկել տնտեսվարող սուբյեկտի հասկացությունը, այդ թվում և կարգավորել մրցակցային օրենսդրության էքստերիտորիալ՝ արտատարածքային կիրառության հարցը՝ այն դեպքերը, երբ հակամրցակցային համաձայնության մասնակից է հանդիսանում օտարերկրյա սուբյեկտը:

5. Քանի որ համաձայնություն հասկացությունն առավել լայն է քան գործարք հասկացությունը, այն իմաստով, որ այն կիրառվում է Օրենքում, առաջարկվում է խմբագրել հակամրցակցային համաձայնությունների հասկացությունը՝ հանելով գործարքի մասին հիշատակումը որպես հակամրցակցային համաձայնության կայացման ձև:

6. Հակամրցակցային համաձայնությունների կայացման այնպիսի ձևերի ուսումնասիրությունը, ինչպիսիք են համաձայնությունները և համաձայնեցված վարքագիծը, հնարավորություն է տալիս հանգել այն եզրակացության, որ այս բաժանումը կատարվում է կախված այն հանգամանքից, թե որոնք են այն փաստերը, որոնք անհրաժեշտ են հակամրցակցային համաձայնության առկայությունը փաստելու համար: Այն պարագայում, եթե լիազոր մարմինն ունի հստակ ապացույցներ, որոնք վկայում են տնտեսվարող սուբյեկտների կողմից համաձայնություն կայացնելու մասին, այլևս անհրաժեշտ չէ ապացուցել որոշակի վարքագծի առկայություն: Եվ ընդհակառակը. այն դեպքում, երբ տնտեսվարող սուբյեկտների վարքագիծը ցույց է տալիս, որ իրենք գործում են համաձայնեցված, լիազոր մարմինը պետք է ազատվի համաձայնության կայացման կոնկրետ փաստը ապացուցելու պարտականությունից:

7. Օրենքում պետք է տրվի մի հստակ չափանիշ, որը հնարավորություն կտա տարբերակել համաձայնեցված հակամրցակցային վարքագիծը ապրանքային շուկայում օբյեկտիվ հանգամանքների փոփոխության արդյունք հանդիսացող համընկնող վարքագծից: Օրենքի ներկայիս կարգավորումը բավականին լայն լիազորություններ է տալիս Հանձնաժողովին, ինչի արդյունքում վերջինս կարող է պատասխանատվության ենթարկել նաև օբյեկտիվ պատճառների հետևանք հանդիսացող համընկնող վարքագծի համար: Այդ իսկ պատճառով առաջարկվում է սահմանել, որ տնտեսվարող սուբյեկտների համընկնող վարքագիծը կարող է դիտարկվել որպես հակամրցակցային համաձայնություն, եթե այդ վարքագծին զուգահեռ բացակայում են օբյեկտիվ տնտեսական պայմանների փոփոխություններ:

8. Օրենքը համաձայնությունները բաժանում է երեք տեսակի՝ հորիզոնական, ուղղահայաց և խառը, ընդ որում ուղղահայաց և խառը համաձայնությունների կարգավորումները համընկնում են: Առաջարկվում է հրաժարվել խառը համաձայնությունների հասկացությունից և հակամրցակցային համաձայնությունները Օրենքում բաժանել երկու տեսակի՝ ուղղահայաց և հորիզոնական՝ որոշակիորեն խմբագրելով ուղղահայաց համաձայնությունների հասկացությունը՝ օգտագործելով դրանց առավել լայն ընկալումը:

9. Ապրանքային շուկաներում կայացվող որոշ համաձայնություններ, ունենալով հակամրցակցային որոշակի տարրեր, այնուամենայնիվ, կարող են ոչ թե վնասել, այլ ընդհակառակը՝ նպաստել տնտեսության զարգացմանը: Ի հեճուկս դրան, Օրենքում հակամրցակցային համաձայնությունների թույլատրելիության որևէ հստակ չափանիշ ամրագրված չէ: Օրենքը զուտ սահմանափակվում է թույլատրելիության որոշակի գնահատողական կատեգորիաներ սահմանելով: Առաջարկվում է Հայաստանում կիրառել արտասահմանում մշակված դոկտրինաների՝ մասնավորապես *per se*, *de minimis*, *rule of reason* կանոնների և բացառությունների համակարգի, Հայաստանի տնտեսության առանձնահատկություններին հարմարեցված տարբերակը:

10. Հակամրցակցային համաձայնություններ կայացնելու համար պատասխանատվություն կիրառելիս առաջին հերթին անհրաժեշտ է հստակ տարանջատել դրանք, մրցակցությանը վնաս հասցնող այլ վարքագծերից: Որոշակի անհատականություն կա համակենտրոնացումների կարգավորման ժամանակ հիշատակվող «միավորում» հասկացության դեպքում: Հաշվի առնելով ՀՀ և ԵՄ օրենսդրությունների ընդհանրապես, և մրցակցային օրենսդրության, մասնավորապես, մոտարկման քաղաքականությունը, առաջարկվում է այդ հասկացությունը դիտարկել ԵՄ օրենսդրության մեջ տարածում ստացած «joint venture» հասկացության համատեքստում:

11. Որոշակի վիճելի է նաև այսպես կոչված կոլեկտիվ գերիշխող դիրքի ինստիտուտի օրենսդրական ամրագրումը: Այդ ինստիտուտը քննադատության է ենթարկվում տեսաբանների մեծամասնության կողմից: Քննադատությունը հանգում է հիմնականում հետևյալին. նախ, գերիշխող դիրքի որոշման ոչ միայն քանակական, այլև որակական չափանիշի առկայության պարագայում, լիազոր մարմինն արդեն իսկ հնարավորություն ունի տարբերակված մոտեցում ցուցաբերել տարբեր կառուցվածք ունեցող ապրանքային շուկաների նկատմամբ: Այս տեսանկյունից արդարացված չէ լիազոր մարմնին լրացուցիչ լծակներ օժտելը: Բացի այդ, իրավակիրառ պրակտիկայում կոլեկտիվ գերիշխող դիրքը կարող է շփոթվել հակամրցակցային համաձայնությունների հետ:

12. Վերլուծելով տեսական գրականության մեջ առկա տեսակետները, արտասահմանյան իրավակիրառ պրակտիկան, ինչպես նաև մոդելավորելով հնարավոր վիճելի իրավիճակները, առաջարկվում է գործարքի տեսքով կայացված հակամրցակցային համաձայնությունները դիտարկել որպես առոչինչ:

13. ՀՀ քաղաքացիական օրենսգիրքը մրցակցության խախտումները, ներառյալ՝ հակամրցակցային համաձայնությունները, դիտարկում է իրավունքի չարաշահման շրջանակներում: Ատենախոսությամբ կատարված ուսումնասիրությունները, որոնք հիմնված են իրավունքի չարաշահման վերաբերյալ առկա տեսական մոտեցումների վրա, ցույց են տալիս, որ արդարացված չէ հակամրցակցային համաձայնությունը դիտարկել որպես իրավունքի չարա-

շահման առանձնահատուկ դրսևորում:

Ատենախոսության հիմնական դրույթները արտացոլված են հեղինակի հետևյալ հրապարակումներում

1. Թավադյան Ա. Մենաշնորհային և գերիշխող դիրքի կարգավորումն «Ըստ տնտեսական մրցակցության պաշտպանության մասին» ՀՀ օրենքի, Պետություն և իրավունք, Եր., 2010, No 3 (49), էջեր 40-47
2. Тавадян А. А. Регулирование доминирующего положения в Республике Армения, Труды молодых исследователей по сравнительному праву, М., 2011, No 1 (10), ст. 13-18
3. Թավադյան Ա. Ապրանքային շուկայի հասկացությունը և մասնակիցները, Հայ գրատպության 500-ամյակին և ԵՊՀ ՈԻԳԸ հիմնադրման 65-ամյակին նվիրված միջազգային գիտաժողովի նյութեր, 3-րդ հատոր, Եր., 2013, էջեր 63-67
4. Թավադյան Ա. Հակամրցակցային համաձայնությունների դրսևորման ձևերը, Պետություն և իրավունք, Եր., 2013, No 2-3 (60-61), էջեր 76-86
5. Թավադյան Ա. Տնտեսական մրցակցության իրավական կարգավորման անհրաժեշտությունը և նպատակը, Դատական իշխանություն, Եր., 2013, No 7 (168), էջեր 42-47
6. Թավադյան Ա. Հակամրցակցային համաձայնությունը որպես անվավեր գործարք, ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի ասպիրանտների և հայցորդների 2013թ. նստաշրջանի նյութերի ժողովածու, Եր., 2014, էջեր 63-70

Резюме

Тавадян Арсен Ашотович

ПРАВОВЫЕ ПРОБЛЕМЫ РЕГУЛИРОВАНИЯ АНТИКОНКУРЕНТНЫХ СОГЛАШЕНИЙ В РА

Защита конкуренции является одной из основных задач, поставленных перед Республикой Армения. Борьба с антиконкурентными соглашениями является одним из основных направлений работы государства в этой сфере. Несмотря на это, до сих пор правовых анализов конкурентного законодательства почти не проводилось. Данная работа направлена на восполнение этого пробела. В диссертации исследуются следующие проблемы:

Анализируются понятия “сделки”, “соглашения” и “согласованного действия”. На основе исследования лингвистических и правовых определений этих понятий, дается их юридическая характеристика. Отмечается, что понятие “соглашение” является более широким, чем “двухсторонняя или многосторонняя сделка”, и включает как те соглашения, которые устанавливают, изменяют и прекращают гражданские права и обязанности (гражданско-правовой договор – двухсторонняя или многосторонняя сделка), так и те соглашения, которые, не создавая гражданско-правовых последствий, фиксируют волю сторон действовать определенным образом. Соотношение же понятий “соглашение” и “согласованные действия” следует рассматривать через призму части 5-ой статьи 5-ой Закона – когда есть какой-либо факт, свидетельствующий о наличии соглашения, можно привлекать к ответственности до того как субъекты продемонстрируют согласованное поведение. Когда же есть факты, свидетельствующие о наличии согласованных действий, полномочный орган не обязан доказывать факт заключения соглашения.

Даются основные принципы экстерриториального применения конкурентного законодательства, в случаях, когда участником соглашения будет являться иностранный субъект.

Критикуется отсутствие в Законе каких-либо четких критериев допустимости антиконкурентных соглашений. На основе исследования иностранных подходов, предлагается применять в Армении правила *de minimis*, *per se*, *rule of reason* и блоковых изъятий, разработанных в США и ЕС, с учетом местных особенностей. Также предлагается применять более четкие критерии разграничения горизонтальных и вертикальных соглашений, имея в виду,

необходимость применения различных подходов к допустимости таких соглашений.

Критикуется институт коллективного доминирования, поскольку тот с одной стороны дает достаточно большие полномочия государству, с другой стороны может привести к путанице с антиконкурентными соглашениями. Предлагается не применять этот институт, тем более, что после поправок 2011 года в Законе, для определения доминирующего положения сейчас применяется как “количественный”, так и “качественный” критерий.

Статья 8-ая Закона, описывая виды концентрации, отмечает, что концентрацией считается также такое “соединение” хозяйствующих субъектов, на основе которого один субъект может прямо или косвенно воздействовать на конкурентоспособность или на принятие решений другого субъекта. Наличие такого понятия делает необходимым разграничение антиконкурентных соглашений и этого вида концентрации. Термину “соединение” соответствует термин “joint venture”, применяемый в законодательстве ЕС, и концентрацией должно считаться только “full function joint venture”, то есть такое соединение, в рамках которого стороны договариваются долговременно соединить свои функции так, чтобы созданное на базе этого управление могло бы руководить ежедневными делами соединения.

На основе исследования иностранных подходов к противоречащим закону сделкам, предлагается в тех случаях, когда антиконкурентное соглашение совершается в форме сделки, применять ничтожность, а не оспоримость в качестве следствия.

Заключение антиконкурентного соглашения квалифицируется как злоупотребление правом, согласно статье 12 Гражданского кодекса РА. Это положение подвергается критике. Злоупотребление правом имеет место в тех случаях, когда лицо использует переданные ему законом полномочия в неправовой форме, следовательно говорить о злоупотреблении правом следует в тех случаях, когда отсутствует предусматривающая ответственность особая норма. За заключение антиконкурентного соглашения законодательством уже предусмотрена ответственность. Следовательно, эти действия нельзя считать злоупотреблением права, так как они уже противоправны.

Основные положения диссертации нашли свое отражение в опубликованных автором научных статьях и были обсуждены на кафедре Гражданского права Ереванского государственного университета.

Summary

Arsen Ashot Tavadyan

LEGAL ISSUES GOVERNING ANTICOMPETITIVE AGREEMENTS IN REPUBLIC OF ARMENIA

Protection of competition is one of the main tasks set for the Republic of Armenia. Fighting anticompetitive agreements is one of the main directions of the state actions in this field. Despite this, almost no legal research has been held with respect to competitive legislation. The stated work is targeted at completing this omission. This thesis covers the following issues.

The concepts of “transaction”, “agreement”, “concerted practices” are analyzed herein. On the basis of the study of linguistic and legal definitions of these concepts their legal description is determined. We believe that the term “agreement” is broader than “bilateral or multilateral transaction” and it includes not only the agreements targeted at creating, changing or terminating civil rights or obligations (civil contract - bilateral or multilateral transaction), but also those which don’t create civil outcomes but somehow fix persons’ will to perform in a particular manner. And difference between the concepts of “agreement” and “concerted practices” should be analyzed through the scope of Clause 5 of Article 5 of the Law on Protection of the Economic Competition (hereinafter “Law”).

There are given the main principles of extraterritorial practice of competitive legislation for those cases when a foreign entity is a participant to anticompetitive agreement. We propose from the Law viewpoint to consider the agreement with the participation of foreign entities as anticompetitive in the event such foreign entity is a participant in Armenian goods market or such agreement refers to material goods available in Armenia.

The lack of clear criteria in the Law for anticompetitive agreement permissibility is criticized herein. On the basis of study of foreign approaches we propose to apply in Armenia the version of systems of *de minimis*, *per se*, rule of reason and group exceptions localized for Armenia. There is also proposed to more clearly distinguish the types of anticompetitive agreements into horizontal and vertical taking into account the need for applying different approaches for their permissibility.

There is criticized the institute of collective dominant position since on the one hand it gives rather big leverage to the authorized body and on the other hand it can lead to unnecessary confusion with anticompetitive agreements. Taking this into

account we propose not to apply the mentioned institute, especially that after amendments of the Law as of 2011 now there is applied both the “quantitative”, and “qualitative” criteria for determination of dominant position. There is analyzed the correlation of anticompetitive agreements and concentration through unification.

The article 8 of the Law, by describing the types of concentration, states that concentration is also such “unification” of entities thanks to which one entity can directly or indirectly affect other entity’s resolution making or competitiveness. Determination of such concept leads to a necessity to clarify the differentiation between anticompetitive agreements and such kind of concentration. We think that the term “unification” corresponds to the concept of “joint venture” applied in EU legislation and only “full function joint venture” should be considered as concentration, that is to say those within the scope of which the parties make arrangement for a long-term unification of their functions so that there exists such management which is directed at managing the daily activities of the unification.

Upon studying current approaches in foreign practice about transactions contradicting law, in particular clear fixing of “presumption of voidness” we propose to use voidness and not disputability as a result for such cases when anticompetitive agreement is achieved in the form of transaction.

Achievement of anticompetitive agreement under the article 12 of the RA Civil Code is considered as abuse of right. This approach undergoes criticism. Abuse of right occurs in case a person exercises their lawfully prescribed authority but not in lawful manner, and thus abuse of right can be referred to in case the person has a right, that is to say when there is a lack of special norm envisaging particular form of legal violation. The legislation already prescribes a liability for achieving anticompetitive agreement, abusing dominant position and for conducting unfair competition behavior. Thus, the mentioned actions cannot be viewed as abuse of right since the given actions are already illegal.

The fundamental standpoints of the thesis have been reflected in the scientific articles published by the author and were discussed at the meetings of the Chair of Civil Law of Yerevan State University.